ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

EUROPEAN
UNIVERSITY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

11 (01)

ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Հաստատված է ԵՀ Գիտական խորհրդի
2020թ. հունիսի 12-ի թիվ 17 նիստում

Գլխավոր խմբագիր՝
Բիշարյան Հեղինե, մանկավարժական գիտ. թեկնածու

Խմբագրական խորհուրդ
Մարտիրոսյան Տ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վահանյան Գ., Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Կիրակոսյան Ն., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայրապետյան Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մելիքյան Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խաչատրյան Ա., իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տոնոյան Ն., իրավագիտության թեկնածու, դոցենտ
Մուրադյան Մ., իրավագիտության թեկնածու, դոցենտ
Շահգելդյան Մ., քաղաքագիտության թեկնածու
Աբրահամյան Հ., պատմական գիտ.դոկտոր, պրոֆեսոր
Եսոյան Մ., պատմական գիտ. թեկնածու, դոցենտ
Մանուկյան Ե., փիլիսոփայական գիտ.թեկնածու
Նալչաջյան Կ., հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
Մանասյան Գ., աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ
Առաքելյան Ս., բանասիրական գիտ. թեկնածու
Հարությունյան Ս., ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. հոդվածների ժող./ ԵՀ.
Գլխ. խմբ.՝ Հ. Բիշարյան,– Եր.: «ԵՀ» հրատ., 2020: Գիրք 11(01) - 640 էջ:

Ժողովածուն ընդգրկում է իրավագիտության, կառավարման, տնտեսագիտության, լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության, փիլիսոփայության, քաղաքագիտության, պատմության, ինֆորմատիկայի, զբոսաշրջության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2020
© Publishing of European University, 2020

ՆԵՐՔԻՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽԹԱՆԻՉՆԵՐԸ

Անի Հարությունյան
ԵՊՀ, Փիլիսոփայության պատմության տեսության ու տրամաբանության ամբիոն, հայցորդ
vsuphilosophy@gmail.com,+374 94 745737

Ներքին կոնֆլիկտի ուսումնասիրության կարևորությունը պատճառավորված է արդի հասարակության և նրա անբաժանելի փարր հանդիսացող մարդու սոցիալական կերպարով: Ժամանակակից մարդը հաճախ ներկայանում է կոնֆլիկտի հետ «ձեռք ձեռքի բռնած»: Այսօր մարդու ներքին ակնկալիքները հակասության մեջ են գտնվում սոցիալական պահանջմունքների հետ: Այս զարգացող բախումը հետզհետե դառնում է ավելի ուժգին, և դրա դրդիչը մարդու՝ ինքն իր հետ պայքարի մշտական գործընթացն է:

Վերլուծության ընթացքում վեր են հանվում մարդու ներքին կոնֆլիկտի լինելիությունն ապահովող գլխավոր ազդակները: Դրանց համադրական նկարագրությամբ ցույց է տրվում, որ այն մարդու մեջ ներարկված «կոդ» է. գոյավորվելով՝ այն արմատավորվում ու զարգանում է հենց մարդու ջանքերի շնորհիվ:

Բխեցվում է եզրակացություն, որ ներքին կոնֆլիկտից փախչել հնարավոր չէ: Իմաստազրկելով դրա դեմ պայքարելը՝ առաջարկվում է հասկանալ կոնֆլիկտի «լեզուն» ու այն ծառայեցնել հօգուտ մեզ:

Հիմնաբառեր. *անգիտակցական, հակասություն, բախում, ագրեսիա, կյանքի ծարավ, մահվան բնազդ:*

Մերօրյա աշխարհակարգի իրարամերժ ըմբռնումների համատեքստում կոնֆլիկտը շարունակում է հանդես գալ որպես սոցիալական ժամանակի բոլոր չափումներում (անցյալ, ներկա, ապագա) գոյություն ունեցող երևույթ: Կոնֆլիկտի թեման արդիական է, քանի որ այսօր ապրող մարդը, անկախ ընթացիկ դարաշրջանի սկզբից հայտարարագրված «համալիր հանդուրժողականության» բանաձևումից, կրում է պայքար, ըմբոստություն, ագրեսիա ոչ միայն դեպի արտաքին աշխարհ, այլև դեպի սեփական անձը: Ժամանակակից մարդը առավել քան կոնֆլիկտային է, առաջին հերթին, ինքն իր նկատմամբ: Ներքին կոնֆ-

լիկտի կարևորության ընդգծման մարտահրավերը մերօրյա հասարակության ու նրա անբաժանելի տարր համարվող անձի կերպարն է: Վերջինս կոնֆլիկտային է: Ինչու՞ է առկա կոնֆլիկտը և որո՞նք են կոնֆլիկտի գոյապահպանությունն ապահովող ներքին ուղղորդիչները: Սույն հոդվածի խնդիրն է բացահայտել այն խթանիչները, որոնք դեր են խաղում ներքին կոնֆլիկտի ձևավորման ու դրա զարգացման վրա: Մարդու կոնֆլիկտայնությունը խթանող անտեսանելի դրդապատճառների վերհանման նպատակով մեթոդական հիմքեր են ընտրվել պատմահամեմատականը, նկարագրականը և համադրականը:

Նախկինում խնդրի ուսումնասիրությունը տեղ գտել է փիլիսոփայության ոլորտում, բայց միայն հատվածականորեն: Ի տարբերություն դրա՝ այս վերլուծության մեջ ընտրված մոտեցումների, տեսակետների՝ միմյանց հետ միաժամանակյա քննության, դրանց զուգորդման իմաստով կատարված եզրակացությունը դրույթների տեսքով ներկայանում է որպես նորույթ:

Կոնֆլիկտային խոսույթի իմաստավորման փորձերը սկսել են դեռևս անտիկ շրջանից: Փիլիսոփայության պատմության մեջ Հերակլիտեսն, ըստ էության, առաջինն է, ով խոսել է կոնֆլիկտի լինելիության անհրաժեշտության մասին՝ նկատելով, որ ցանկացած շարժում իր մեջ բովանդակում է փոփոխություն:Բոլոր երևույթների գոյությունը հնարավոր համարելով դրանցում առկա հակադիր սկզբների մշտական բախման ու պայքարի շնորհիվ՝ նա հայտարարում է. «…պատերազմն ամեն ինչի հայրն ու թագավորն է…» [1, c. 230]: Անտիկ փիլիսոփան փաստորեն ազդարարում է փոփոխության, հակադրության (պատերազմի) ու դրանցից ածանցվող կոնֆլիկտի բնութենական լինելու գաղափարը՝ պնդելով, որ ամեն մի գոյավորի բնույթը կոնֆլիկտածին է:

Հիշյալ թեմայի մասին խորհրդածելը փիլիսոփայության տեսանկյունից մեզ միանշանակորեն ուղղորդում է դեպի մարդն ու նրա բնույթը: Կոնֆլիկտային խոսույթն իր էությամբ ծավալվում է փիլիսոփայական այն հարցադրման շուրջը, թե ինչպիսին է մարդն իրեն ներհատուկ ապրումներով ու աշխարհի հետ հաղորդակից դառնալ ու բնածին կանխադրույթներով: Ինքնաճանաչման գործընթացն է հենց առաջին կոնֆլիկտը, երբ մարդը հայացք նետելով դեպի ինքն իրեն, բախվում է իր ներաշխարհի ու իրենից դուրս գտնվող իրականության հետ: Մարդու էությանը հարիր հակասականության բացահայտման ամբողջակա-

նությունը քննելը թերևս պետք է կապել «Ճանաչիր ինքդ քեզ» հայտնի սկզբունքի համապարփակ քննության հետ: Կոնֆլիկտ գոյություն ունի, երբ առկա է հակադրություն: Իսկ հակադրությունն ապրում է մեզնից յուրաքանչյուրի մեջ:

Նկատենք, որ կոնֆլիկտային խոսույթի մասին մտորումները չեն սահմանափակվում միայն փիլիսոփայական գիտակարգի շրջանակներում: Հետաքրքրված լինելով կոնֆլիկտի այս կամ այն կողմով՝ խնդրո առարկան դառնում է հետազոտության օբյեկտ կենսաբանության, հոգեբանության, մանկավարժության, քաղաքագիտության, մշակութաբանության, պատմության, սոցիոլոգիայի մասնագետների համար: Վերացարկելով դասագրքային սահմանումների բազմազանությունից՝ բովանդակապես կոնֆլիկտ ասելով կարող ենք հասկանալ հակառակ ուղղվածություն ունեցող և փոխադարձաբար իրար բացառող շարժառիթների, հայացքների, նպատակների, պահանջմունքների, դիրքորոշումների, շահերի բախում: Կարևոր է հասկանալ, որ կոնֆլիկտում վճռորոշ դեր են կատարում վերջիններիս հենց տարաբևեռ, հակընդդեմու միմյանց բացառող և ոչ թե պարզապես դրանց տարբեր լինելը:

Անգիտակցականի բնույթը որպես կոնֆլիկտայնության վկայություն

Թեմատիկ վերլուծությունը մեզ ուղղորդում է դեպի մտածողության՝ «դասական» համարվողկացարանի՝ հոգեկանի իմաստային և բովանդակային բացորոշում: Եվ իրոք,նախորդ դարի առաջին կեսին հոգեվերլուծության մեջ մարդու հոգեկանի նոր քարտեզագրման մեջ դերակատարում տրվեց ոչ միայն գիտակցությանն, այլև անգիտակցականին: Մարդու էության, մասնավորապես, հոգեկանի կառուցվածքում հակասական բևեռների լինելիության նկատմամբ առանձնակի ուշադրության գրավումը ժամանակագրական առումով բոլորովին պատահական չէ: Մարդու վարքագծում անգիտակցականի կողմից որոշ դեպքերում առաջնորդության ստանձման մասին թեզն ունեցավ հիմք՝ ի դեմս երկու համաշխարհային պատերազմների բնութենական ակունքների քննարկման: Ամբողջ աշխարհը ցնցած այդ քաղաքական երևույթների կայացումը կապելով մարդկային ագրեսիայի հետ՝ փորձ կատարվեց դրա սաղմը որոնել անգիտակցականի մեջ: Սրանով ստեղծվեց մտահայեցողական կամուրջ անգիտակցականի ու ագրեսիայի թեմա-

ների միջև՝ ակնարկելով դրանց միջև առկա պատճառահետևանքային հարաբերակցության մասին: Ժամանակին հնչեցված ֆրոյդյան անսպասելի հայտարարությունն առ այն, որբանական էակն իր գործողություններում կառավարվում է անգիտակցականով կամ նախագիտակցությամբ, տակնուվրա արեց բանական էակի գիտակից «դասական» մոդելը: Սրան հաջորդած բժշկագիտական հետազոտությունները լույս սփռեցին այն դրույթի վրա, որում բանական էակը հոգևոր հակադրությունների մեջ եփվող անձ է՝ իր վարքագծի մոդելի «անսովոր»՝ գիտակցականության տիրույթից դուրս առկա շարժառիթներով հանդերձ:

Եվ այսու, կոնֆլիկտի լինելիության ներքին հիմնավորումը հարկ ենք համարում սկսել մարդու հոգեկանի կառուցվածքից, որում կարող ենք բացորոշել մարդու մեջ ընթացող պայքարը սեփական ցանկությունների, մղումների ու այն արգելքների միջև, որոնք պարտադրվում են սոցիալական միջավայրի կողմից: Այն, թե ինչպես է ընթանում ու զարգանում այս բախումը, անգիտակցականի ու գիտակցության հնարավոր ու անհնարին երկխոսության հարթակում է: Սեփական անձը ճանաչելը ենթադրում է գիտակցել, որ մարդն ապրում է անգիտակցականի մակարդակում,և սա այն իրավիճակում, երբ կա մշտական պայքար գիտակցաբար չընդունելու այն, ինչը գիտակցության տիրապետության տակ չի գտնվում: Քննարկվող եզրույթի ներքին դրդիչների մասին առաջինը խոսել է Զիգմունդ Ֆրոյդը: Նրա տեսության մեջ, բացի շատ վիճարկելի ու ժամանակին ոլորտի այլ ներկայացուցիչների համար անընդունելի դրույթները, հայտարարագրվեց մարդու բնույթին հարիր ու նրա հետ մշտապես առկա ներքին հակասականության գաղափարը: Ֆրոյդյան ինքնաճանաչողության գործընթացը բարդանում է էլ ավելի, երբ մտածողը օգնության է կանչում ոչ միայն բանականությանն, այլև սրտին: Բովանդակապես բարդ, բայց ևիրականացման տեսակետից երկարաժամկետ այս իրողության մեջ մարդը, լինելով հետևողական, կհաջողի՝ ազատագրվելով այս կամ այն զգացումը/ապրումն իրենից հեռու վանելու կամ դուրս մղելու անհրաժեշտությունից: Փաստորեն, որքան խորն է անձը ներթափանցում ինքն իր իրականության մեջ, այնքան նա ավելի զգոն է դառնում իր գիտակցության մեջ.գիտակցությունը դառնում է երևացող, իսկ ներքին հակասականությունը՝ կոնֆլիկտայնությունը, քչացող: Վերոգրյալով հանդերձ «հոգեվերլուծությունը չի կարող գիտակցությունը համարել հոգեկանի կառուցվածքի էությունը,

բայց փոխարենը պետք է այն համարի հոգեկանի հատկանիշը, որը-կա՞մ կմիանա կա՞մ չի միանա դրա (այս.՝ հոգեկանի, հեղ.) մնացյալ հատկանիշներին»[7, c. 841]: Անգիտակցականը լինելով բնատուր տարր՝ իր մեջ է ամփոփում բոլոր այն ցանկությունները, անհանգստություններն ուապրումները, որոնք մարդն ամեն կերպ փորձում է մոռանալ՝ դրանք չգիտակցելու ճանապարհով: Բանական էակի ամբողջ կյանքը ներկայացնելով հոգեկանի տիրապետության տակ՝ Ֆրոյդն ընդգծում է գիտակցության կամ «Ես»-ի կազմավորումը որպես անհատի սոցիալականացման մոդելի (իր տարաբնույթ պահանջմունքներով հանդերձ) ու դրա հետ հակասականության մեջ հայտնվող ցանկություններիառճակատման, և որպես ավարտ՝ վերջիններիս արտամղման համատեքստում, որը «համարվում է հոգեկան կառուցվածք ունեցող մարդու պաշտպանողական հնարքներից մեկը» [6, c. 358]:

Անդրադարձ կատարելով մարդու կոնֆլիկտայնությունը սնուցող տարրերին՝ արժանահավատ է հիշատակել անգիտակցականում ծաղկող կոնֆլիկտն ապահովող երկու տեսակի բնազդների՝ կյանքի ծարավի ու մահվան բնազդի մասին: Ֆրոյդյան հոգեփիլիսոփայական համայնապատկերում մահվան բնազդով վեր է հանվում մարդու մեջ առկա ապակառուցողական, քայքայիչ կողմը: Պետք է ընդունել, որ յուրաքանչյուր անձ թշնամական, չարակամ վարգագիծ ցուցաբերելու հակվածություն ունի: Կարծելով, որ մարդու առաջնաշարժիչը սերն է կյանքի նկատմամբ ու կործանարարությունը, մտածողը հանդես է գալիս բնազդաբանական տեսության դիրքերից: Դրանք պայքար են մղում անգիտակցականի տիրույթում ու փաստորեն պատճառավորում մարդու բարի կամ չար լինելը: Որքան մահվան ու կյանքի բնազդները առավել ցայտուն են դրսևորվում մարդու հոգեկանում, այնքան տվյալ մարդը ձգտում է արտաքին՝ սոցիալական միջավայրում կայացման: Հենց այս եղանակով է դրսևորվում ներքին կոնֆլիկտն օբյեկտիվ աշխարհում: Անգիտակցականում առկա ներքին այս հակասությունը կազմավորում է մարդկային բնույթի «ի սկզբանե կոնֆլիկտային լինելը» [4,c.84]: Մտածողն, այնուհանդերձ, ամբողջապես չի բացառում այս կամ այն սկզբի գերակայության հարցում որոշակի աշխատանք տանելու շատ փոքր հնարավորությունը: Սակայն, դա ընդունելու պարագայում ձևավորվում է ևս մեկ հակասություն, այն է՝ անգիտակցականի վրա ազդեցության անհնարինության ու դրա ներսում առկա երկու սկզբների

«չափաբաժինների» կարգավորման առարկան: Սրանով պայմանավորված, հավանաբար, հոգեվերլուծության մեջ կրկնակի հակասականության արգելքը հաղթահարելու նպատակով առաջ է բերվում «սուբլիմացիա»[1] հասկացույթը, երբ մի մարդ իր լիբիդոն, որը ամենահաճախն է ճնշման ենթարկվում, փոխակերպում է հիմնականում սոցիալական նշանակություն ունեցող նպատակների իրականացման:

Իմաստային առումով փաստորեն մասնագիտական գրականության մեջ կոնֆլիկտի ներքին դրդապատճառներից ազատագրվելու հնարավորությունը կապվում է «սուբլիմացիա»եզրույթի հետ: Բանական էակի արարումն արձանագրելով կոնֆլիկտի հետ միաձույլ՝սուբլիմացիայի մեխանիզմը դիտարկվում է ոչ այնքան մարդու բնույթի հակասականության հաղթահարման, այլ դրա շրջանցման ազդակ, ինչի օգնությամբ հնարավոր է դառնում գոնե միառժամանակ խուսափել անգիտակցականի ապակառուցողական տարազան, անկանխատեսելի դրսևորումներից: Թեպետ պետք է նկատել, որ սուբլիմացիան, ի սկզբանե, համարվել է «փրկության օղակ» կոնֆլիկտներից ամենավտանգավորի՝ ներանձնային կոնֆլիկտի կառավարման համար, ինչը հետագայում անհուսալիորեն հերքվել է:

Բնատուր ագրեսիան որպես կոնֆլիկտի ներքին ցուցիչ

Զ.Ֆրոյդը միակը չէ, ով մարդու կոնֆլիկտային էության դրդիչները կապում է ֆիզիոլոգիական պատճառավորվածության հետ: Կարծել, որ ծնվելուն պես մեզ կանխատրված էոչ ավել ու ոչ պակաս ագրեսիան, վարքագծի բևեռայնությունը, և որ ամենակարևորն է, դա է այս աշխարհում ապրելու բնականոն ուղին, ժամանակին պնդում էր Ք.Լորենցը, ում «Այսպես կոչված չարը.դեպի ագրեսիվության բնական պատմություն» աշխատությունը հրատարակման պահից վայելեց հասարակական մեծ հետաքրքրություն:

Թեպետ թե՛ Ֆրոյդը, թե՛ Լորենցն իրենց տեսություններում բացորոշել են ագրեսիան որպես բանական էակին հասկանալու կարևոր տարր, սակայն իրենց հայացքներում կա մեկնաբանության էական

[1] Ըստ էության, սուբլիմացիան անցանկալի մղումների և բնազդների վերափոխումն է սոցիալական տեսանկյունից առավել ընդունելի ձեևերի. տե՛ս Բժշկական հոգեբանություն.ուսումնական ձեռնարկ. խմբ.Գասպարյան Խ.Վ., էջ 159:

տարբերություն: Լորենցի պնդմամբմարդը գործնականության դրսևորման հարցում առավել հաջողակ է այն դեպքում, երբ ագրեսիվ է: Ագրեսիվ լինելը օգտակար է: Ագրեսիվ լինելը, նույնն է թե՝ ֆիզիոլոգիապես մարդու բնույթի կոնֆլիկտայնությունը, լորենցյան ըմբռնմամբ բացասական իմաստ չի ենթադրում՝ ի տարբերություն Ֆրոյդի, ով համոզված էր, թե ագրեսիան, պարունակելով վնասի շարժառիթային փոխանցման տարրեր, ծառայում է կոնֆլիկտայնության խթանմանն ու աստիճանաբար սնուցվող ապակառուցողական ապրելակերպին: Նրա մոդելում մարդը գոյություն ունի «ինքն իրեն քայքայելու ու նորից վերածնվելու ճանապարհով»: Միաժամանակ, ագրեսիային որպես բնազդ բնորոշում է ակամա դրսևորվելու հատկությունը և «...այդ բնազդի վտանգը հենց ինքնաբերական լինելն է»[3, c.26]: Ագրեսիան չի սնուցվում արտաքին գործոնների ազդեցությամբ: Բայց և ներսից այն դրսևորման պահանջ ունի, ու ինչ-որ միպահի այն պետք է դուրս հորդի:

Այս վերջին դիտարկման տրամաբանությունը որսալը միանգամայն դյուրին է, երբ ակնարկ է կատարվում Լորենցի՝ Դարվինի էվոլյուցիայի տեսությանն ու բնական ընտրության պայքարի գաղափարին: Եվ եթե այս մտքին զուգորդենք նրա կողմից առաջ քաշված դրույթը-նախնիներից ագրեսիայի հավանական «ժառանգորդվածության» մասին [3, c.23], կարելի է ենթադրել, որ ագրեսիան դարձել է բնատուր և միևնույն ժամանակ մարդը կոփվել է՝ լինելով ագրեսիվ:Մարդն իր ագրեսիան ձեռք է բերել բնապատմական, հազարամյակների տևականություն ունեցող զարգացման արդյունքում: Այս որակը մարդուն տրվել է ոչ թե ինքնաբերաբար, այլ կյանքի համար մղված պայքարին ի պատասխան: Սա, ամենայն հավանականությամբ, Լորենցի կողմից իր տեսության օգտին կիրառված ամենաակնհայտ փաստարկներից մեկն է: Թեպետ հաճախ է թմբկահարվում այս հեղինակի կողմից կենդանիներին հետազոտելու փաստը,և ստացված արդյունքները բանական էակի վրա արտատպելու նրա քայլը, սակայն ակնհայտ է, որ մտածողն իր տեսության մեջ միայն չի նույնացրել կենդանուն մարդու հետ, այլ շատ ընդգծված ցույց է տվել հենց մարդու զարգացումը՝ երբեմն ցուցադրելով վարքի նմանություններ դրանց միջև, հատկապես երբ վերլուծության էր ենթարկում նախաքաղաքակրթական պատմական ժամանակաշրջանը: Սրանով պայմանավորված՝ կարծում ենք նաև, որմտածողը չի ծավալել մարդու ագրեսիայի դրսևորման կենսաբանական

ակունքների քննարկում, ինչը պարբերաբար սխալմամբ վերագրել են իրեն տեսության թերի ըմբռնման արդյունքում[2]:

Այսպես՝ մարդ-կոնֆլիկտ-ագրեսիա եռյակի փոխպայմանավորվածությունը ենթադրում էանընդհատ պատերազմական վիճակում գտնվելու իրողություն: Այս միտքը կարող ենք դիտարկել որպես ակնարկ է առ այն, որ ագրեսիան չպետք է մնա մեռյալ վիճակում. անհրաժեշտ է դրանից ձերբազատվել: Լորենցն առհասարակ համոզված է, որ «...ժամանակակից քաղաքակիրթ յուրաքանչյուր մարդ տառապում է բնազդային-ագրեսիվ դրդապատճառների անբավարար լիցքաթափումից» [3, c. 117]: Կոնֆլիկտը կա, ու այն սրվում է, որովհետև մարդու էության ագրեսիվ-կազմաքանդող էներգիան անընդհատ ավելանում է, և այն մարդու տիրապետության տակ հավետ չի մնում:

Ի հեճուկս վերոգրյալի՝ կոնֆլիկտային դրսևորման այս ներհատուկ տեսակը՝ ագրեսիան, կարող էնաև ծառայել հօգուտ մարդու: Ի պաշտպանություն մարդու համար կարևորություն ունեցող երևույթների, շահերի՝ կոնֆլիկտային ագրեսիվությունն իր դրսևորմամբ ևս տեղ ունի [8, c. 35]: Իսկ սա նշանակում է, որ ագրեսիան մշտնջենական չէ, ինքնաբուխ չէ, բայց այդուհանդերձ կա:Է.Ֆրոմն առհասարակ կարևորում էր մարդու տեսակը՝ ըստ սոցիալականացման բնույթի, և դրանից էր ածանցում ներանձնային կոնֆլիկտի որակական գիծը: Կախված նրանից, թե մարդը կյանքի նկատմամբ ունի լավատեսական, սիրառատ, թե սպառողական ուչարորակ վերաբերմունք, նա խթանում է առաջընթաց ապահովող ու քայքայիչ հատկություն ունեցող կոնֆլիկտների առաջացումը[3]:

Ինչ վերաբերում է Լորենցի դիտարկմանն այս առնչությամբ, ապա նրա հայացքներում ագրեսիայի ուղղվածությամբ պրակտիկ վարժանքներ ամենևին չկան: Մտածողը միամտաբար հակված է հավատալ, որ ինքնաճանաչման մասին լոկ տեսական գիտելիքներ կուտակելը, այդ

---

[2] Այս առնչությամբ տեղին է հիշատակել Դ.Լերմանին ու Լ.Հայզենբերգին.տե՛սLehrmann D.S., Problems Raised by Instinct Theory, A Crituque of Konrad Lorenz's Theory of Instinctive Behavior, in: Quarterly Review of Biology, Vol. 28, N.4, New York 1953, էջ337-364//Eisenberg L.,The Human Nature of Human Nature, in: Science.Vol. 176, No. 4031, Washington 1972, էջ123-128:

[3] Է.Ֆրոմն օգտագործում է «բիոֆիլիա» և «նեկրոֆիլիա» տերմինները. տե՛ս **Фромм Э**. Анатомия человеческой деструктивности/ Авт. вступ. ст. П. С. Гуревич. — Республика, Москва 1994, էջ 280-318:

թվում՝ բնատուր ագրեսիայի գոյության մասին տեղեկություն ունենալն, ավելի քան բավարար է: Ինչ վերաբերում է գիտելիքին, ապա այն հատկապես պետք է վերաբերի «մեր վարքագծի մեջ առկա պատճառական կապերի» օբյեկտիվ հետազոտությանը, չէ որ «...աշխարհում առկա բոլոր երևույթների հիմքում ընկած են բնության օրենքները և այս իմաստով մենք բոլորս հանգեցված ենք բնական օրենքներին» [2, c.56]: Շարժվելով այս ճանապարհով՝ Լորենցը, մասնավորապես, փորձ է կատարում ըմբռնել, թե ինչպես կարելի է փոխատեղում իրականացնել ագրեսիա առաջացող օբյեկտի ու ագրեսիայի հետ որևէ առնչություն չունեցողի միջև կոնֆլիկտի վերացման նպատակով [2, c.176]: Որոշակի վերապահմամբ կարելի է ընդունել, որ մտածողն այս կերպ խոսել է սուբլիմացիայի մասին, որի վերաբերյալ սակայն իր գլխավոր աշխատության մեջ չկան վերլուծություններ:

Կարծում ենք, որ Լորենցի՝ ագրեսիայի մասին տեսությունը, հենքում ունենալով վերոնշյալ դարվինյան հայեցակետը, չենթադրեց դրա գոյության պատճառների քննարկումը: Եվ անգամ դրա համար Լորենցը չկարևորեց մարդու մտահայեցողական հնարավորությունները: Ի հեճուկս Լորենցի, Ֆրոյդը դարձավ «մարդասեր». նահայտարարեց մարդու բնածին անսահման ունակությունների մասին: Ամեն մեկիխնդիրն իր հոգեկանում է, բայց խնդրի վրա խոշորացույց պահելը ևս մարդու ներուժն է: Հեռու փախչելով մեր կոնֆլիկտային էությունից՝ մենք ավելի շատ ենք թաթախվում դրա մեջ ու հակառակը, ընդառաջ գնալով դեպի խորքը, ունակ ենք լինում ճանաչելով այն ղեկավարել: Կոնֆլիկտից պետք է ոչ վախենալ և առավել ևս ոչ էլ խուսափել. դրա հետ պետք է կարողանալ աշխատել՝«գործարքի մեջ» մտնելով և գտնելով առավել օգտակար որոշումն այս կամ այն իրավիճակի առնչությամբ: Հատկանշական է, որ փիլիսոփա, սոցիոլոգ Մ.Ֆոլլեթը կարևորում էր կոնֆլիկտի հետ սովորել աշխատելու հմտությունը՝շեշտադրելով ոչ թե կազմաքանդող, այլ կառուցողական հետևանքներին դրա հանգեցումը: Ընդգծելով գործողություններից դեպի մտածողության փոփոխության ճանապարհը՝ նա մոդելավորում է հեղափոխական հետևյալ կարգախոսը. «քանի դեռ չեք փոխելմարդկանց վարքագծի մոդելը,Դուք չեք կարող փոխել հենց մարդկանց» [5, c. 75]:

Փաստորեն այն կոնֆլիկտները, որոնց առաջացման հիմքում ընկած է ագրեսիան, սկզբունքորեն կարող են և՛ զարգանալ և՛ անկում

ապրել: Ագրեսիան մարդու վարքագծի տեսակը պատճառավորող բնատուր հատկություն է, ինչով պայմանավորված այն տեղ ունի յուրաքանչյուրիս կյանքում: Սակայն լինելով մեզ կանխատրված՝ դրա ակտիվացումն ու պասիվացումը ենթակա են արտաքինից ղեկավարվող մի շարք գործոնների: Դրանց շարքում հրատապություն է ձեռք բերում հուզական սովը: Կարիք չունենալով ժառանգել հույզ՝ ժամանակակից մարդը գործի է դնում իր բանականությունը. խոսքն այստեղ հուզական այն որակազրկման մասին է, երբ կա հաճույք, բայց չկա ուրախություն: Սրանցից առաջինն անցողիկ է ու իր կարճաժամկետ լինելը ենթադրում է տրված առանց չարչարանքի: Ի հեճուկս դրա՝ ուրախությունը հաճախ երկարատև աշխատանք ու ջանք պահանջող ապրում է: Ընդ որում, ներդրվելիք ուժը գրեթե միշտ պահանջում է անհարմարության ապրում:

Հաշվի առնելով վերհիշյալ մտածողների միջև առկա տարբերությունները թեմատիկ առնչությամբ, ակնհայտ է մի կարևոր փաստ՝ իրենք համոզված են, որ մենք ունենք բնատուր ագրեսիա, իսկ դա նշանակում է, որ մարդը չի կարող ընտրել չլինել կոնֆլիկտային.նա այդպիսին է ծնվել: Տարբերիչ գիծը կայանում է այն հանգամանքի մեջ, թե ուր և ինչպես է մարդը ուղղորդում ագրեսիան՝ դեպի կյանքի կառուցարկո՞ւմ, թե կազմաքանդում:

Եզրակացություն

Ի վերջո, ապրելով օբյեկտիվ իրականության ու ներաշխարհի պահանջածի/արգելածի, և համապատասխանաբար, ցանկացածի կոնֆլիկտային իրողության միջև, մարդու համար կշեռքի ո՞ր նժարն է դառնում ծանրակշիռ: Հաշվի առնելով, որ մեզնից յուրաքանչյուրը ակամա հայտնվում է մշակութային խճանկար ներկայացնող իրականության մեջ, ստացվում է, որ այս երկուսի միջև պայքարը կարող է ավարտվել հոգուտ ներանձնայինի այն պարագայում, եթե սոցիումն իրեն անհրաժեշտը ներկայացնի մարդուն հաճոյապաշտ թվացող պահանջների առաջ քաշման հաստատակամության համատեքստում՝ փոխարենը հերքելով պատժելու ֆենոմենը:

Ամփոփելով կարող ենք ասել, որբովանդակապես կոնֆլիկտները մեծ հաշվով մակաբերված են կյանքի բնութենականությունից: Այսպիսով, հանգում ենք հետևյալին՝

- Էությամբ կոնֆլիկտները, անկախ իրենց ուղղվածությունից ու բնույթից, ծառայում են որպես կյանքի վերաթարմացման ազդակ՝ ամեն ինչ կամ տվյալ դրվագը նորից սկսելու, անելու հնարավորության համատեքստում:
- Որքան ակտիվ է կոնֆլիկտը մարդու ներսում, այնքան մեծ է հավանականությունը, որբանական էակնարտաքին աշխարհում կհայտնվի կոնֆլիկտային հակամարտության մեջ: Իսկ քանի որ բոլորս ներսում ապրումակցում ենք կոնֆլիկտի հետ, ստացվում է, որ արտաքին աշխարհում կոնֆլիկտ միշտ լինելու է, և մենք դրանում ներգրավված ենք լինելու:
- Ոչ մի բանական էակ ներքին կոնֆլիկտից փախչել չի կարող:

Փիլիսոփայական տեսանկյունից կոնֆլիկտից չխուսափելու իմաստը կայանում է դրա հետ մեկտեղվող ու ենթադրվող փոփոխության հանգամանքն անբեկանելիորեն ընդունելու մեջ: Իսկ թե այդ փոփոխությանն ինչ ուղղվածություն, երագ ու բովանդակություն կհաղորդվի, մնում է հուսալ, որ պատասխանատություն կրողը մարդն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Гераклит Эфесский**: все наследие: на языках оригинала и в рус. пер.: крат. изд. / подгот. С.Н. Муравьев. ООО «АдМаргинемПресс», Москва 2012.
2. **Лоренц К.** Оборотная сторона зеркала: Пер. с нем. / Под ред. А. В. Гладкого; Сост. А. В. Гладкого, А. И. Федорова; Послесловие А. И. Федорова. Республика, Москва 1998.
3. **Лоренц К.**, Так называемое зло. К естественной истории агрессии. Культурная революция, Москва 2008, http://www.modernproblems.org.ru/philosofy/94-agression.html (26.02.2020):
4. **Романов И.**Психоанализ: культурная практика и терапевтический смысл.(Введение в теорию, практику и историю психоанализа.) Пособие для учителей. – Интерпракс, Москва 1994.
5. **Фоллет М.**, Отдача распоряжений // Классики теории государственного управления: американская школа /Под ред. Дж.Шафритца, А.Хайда, Изд-во МГУ, Москва 2003.

6. **Фрейд З**. Психология бессознательного: Сб. произведений, Москва, 1990.
7. **Фрейд З**. Я и Оно: Сочинения, Изд-во ЭКСМО, Москва 1998.
8. **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности/Авт. вступ. ст. П.С.Гуревич. – Республика, Москва 1994.

ОСНОВНЫЕ СТИМУЛЫ ВОЗНИКНОВЕНИЯ ВНУТРЕННЕГО КОНФЛИКТА

Ани Арутюнян
ЕГУ, Кафедра истории философии, Соискатель

Необходимость изучения внутреннего конфликта обусловлена типом современного общества и образом его неотъемлемой части, а именно образом человека. Он считается конфликтным. Сегодня внутренние ожидания человека находятся в противоречии с социальными требованиями общества. Данное развивающееся столкновение постепенно становится все более интенсивной, причиной чего является постоянный процесс борьбычеловека с самим собой.

В ходе исследования определяются основные стимулы, обеспечивающие порождение внутреннего конфликта. К концу их аналитического сравнения выясняется, что внутренний конфликт - некий «код», внедренный в человека: порождаясь он укореняется и эволюционирует благодаря нам же самим.

Делается вывод относительно того, что "сбежать" от этого конфликта невозможно. Считая борьбу с ним бессмысленной, предлагается понять его «язык» и заставить его работать на нас.

Ключевые слова: бессознательное, противоречие, столкновение, агрессия, жажда к жизни, инстинкт смерти.

BASIC INCENTIVES OF THE ORIGIN OF INTERNAL CONFLICT

Ani Harutyunyan
YSU, Chair of History of Philosophy, Researcher

The need to study internal conflict is determined by the type of modern society and the image of its integral part, i.e. a person's model. It is considered as conflicting. Today, man's internal expectations conflict with the social requirements.This developing clash is becoming more intense, the reason for which is the constant process of a person's struggle with himself.

The study identifies the main incentives that ensure its generation. In the end of analytical comparison, it turns out that the internal conflict is a "code" embedded in a person: by originating it's rooted and evolves thanks to ourselves.

Thus if it's impossible to "escape" from this conflict it's proposed to understand its "language" and try to make it work for us.

Keywords: unconsciousness, contradiction, collision, aggression, thirst for life, death instinct.

Ընդունվել է տպագրության՝ 15.04.2020թ.
Գրախոսվել է՝ 08.05.2020թ.